ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիս, 2020 թվականի № 29-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի իբ) կետի, ինչպես նաև «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության պահանջներով և հանդես գալով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության հիմնադրի անունից՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից հիմնադրել «ՆՈՐՔ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» անվանմամբ «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» կազմակերպաիրավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2. «ՆՈՐՔ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանել, որ հիմնադրման պահին «ՆՈՐՔ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության բաժնեմասը կազմում է 100 (հարյուր) տոկոս՝ 1 000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

4. Հաստատել «ՆՈՐՔ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը:

5. «ՆՈՐՔ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն հաստատել Մարինե Հրաչյայի Ավետիսյանին (նույնականացման քարտի համարը՝ 002755403, տրված՝ 2015 թվականի հունիսի 2-ին 004-ի կողմից, հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տոլբուխին շ. 34, բն. 14, ՀԾՀ՝ 7009760233, էլ. փոստ՝ marina.avetisyan1@gmail.com)՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

10 հուլիս, 2020 թվականի

ք. Երևան